ցած լաբորատորիայի մասին, որը նագիտությամբ աշխատանք են գտել թյունը:

Աշակերտների այց Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Վանաձորի մասնաճյուղ

Ավագ դպրոցների հետ համագործակցության պայմանագրի շրջանակներում Վանաձորի թիվ 11 դպրոցի 50 աշակերտներ մասնագիտական կողմնորոշման նպատակով այցելեցին ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղ: Նրանք եղան ճարտարագիտական լաբորատորիաներում, որոնք հիմնականում նախատեսված են ՀԱՊՀ-ի ուսանողների լաբորատոր և գիտահետազոտական աշխատանքների կատարման համար, տեղեկացան հեռավար ուսուցման մասին, որը հնարավորություն է ստեղծում կազմակերպել տեսահամաժողովներ ՀԱՊՀ-ի մասնաճյուղերի և կենտրոնական կրթահամալիրի միջև: Մինչ լաբորատոր փորձեր կատարելը արտաքին կապերի համակարգողը տողերիս հեղինակը, աշակերտներին ներկայացրեց պոլիտեխնիկն իր հնարավորություններով և հեռանկարներով հանդերձ, նշեց նաև ինժեներական կրթության կարևորության մասին:

Մեքենագիտության և էլեկտրատեխնիկայի լաբորատորիայի վարիչ, դասախոս Շավարշ Ոսկանյանը, ֆիզիկայի լաբորատորիայի վարիչ, դասախոս Մարինե Մանուկյանը նորագույն սարքավորումներով կատարեցին լաբորատոր փորձեր: Մեխանիկական տատանումների ուսումնասիրության լաբորատոր հարթակի վրա փորձերի կատարման ժամանակ աշակերտները գործնականորեն կիրառեցին և ամրապնդեցին իրենց տեսական գիտելիքները մաթեմատիկական, ֆիզիկական ճոճանակների տատանումների մասին, երկրաչափական օպտիկա լաբորատոր հարթակի վրա ուսումնասիրեցին երկրաչափական օպտիկայի հիմնական օրենքները: Մագնետիզմ և էլեկտրամագնետիզմ լաբորատոր հարթակի վրա ուսումնասիրեցին մագնիսական դաշտի հատկությունները, տրանսֆորմատորի գործառույթը:

Ռոբոտաշինության լսարանում խմբակի վարիչ Արաքսյա Բալյանը աշակերտներին ծանոթացրեց ռոբոտաշինության խմբակի աշխատանքներին, աշակերտների պատրաստած ռոբոտներին, տեղեկացրեց խմբակի ձեռքբերումների, նվաճումների և հետագա պլանների մասին:

Ավագ դպրոցի աշակերտները տեղեկատվական հանդիպման ընթացքում կարողացան ընդլայնել գիտելիքներն ինժեներական ոլորտում, կողմնորոշվեցին, թե ինչպես ճիշտ օգտագործել իրենց ներուժը տվյալ ոլորտում:

ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղը մասնագիտական կողմնորոշման նպատակով պարբերաբար անցկացնում է բաց դռների օրեր:

ՏԱԹԵՎԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱԴԵՄԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ը ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է